


Գոլևոյ թելից



Թելով պատրաստված գոլևոյը հաճախ օգտագործվում է որպես մասնիկ՝ այլ գեղեցիկ պատրաստվածքներ ստանալու համար:


Այդպիսի գոլևոյ պատրաստելը բավականին հեշտ է, ժամանակատար և ծախսատար չէ: Գոլևոյը պատրաստելու համար անհրաժեշտ են՝ բամբակյա հաստ թել, էմուլսիա սոսիսձ, փուլչիկ, մեկանգամյա օգտագործման փոքրիկ բաժակ, ասեղ, մկրատ:



Փուլչիկը փչում ենք ցանկալի մեծության չափով:



Ասեղը թելում ենք բամբակյա թելով, ապա, բաժակի հատակից մոտ 5մմ բարձրության վրա, թելած ասեղը ծակելով անց ենք կացնում բաժակի միջով.







Ասեղը հեռացնում ենք թելի վրայից, ապա բաժակի մեջ սոսիսն լցնում մոտ 1-1.5սմ բարձուրե՛յամբ.



Այժմ, մի ձեռքով բռնելով փուլչիկը, իսկ մյուսով՝ սոսնձով լի բաժակը, բաժակը փուլչիկի շուրջ պտտեցնելով թելը սկսում ենք փաթաթել փուլչիկի վրա: Թելի ազատ ծայրն անցնելով սոսնձի միջով, սոսնձոտվում է: Սոսինձը հետագայում չորանալով, ամրուլթյուն կհաղորդի գնդին: Թելի մյուս ծայրը կծիկից չենք կտրում, քանի դեռ ամբողջովին փուլչիկը չենք փաթաթել թելով:



Երբ արդեն թելը բավականաչափ փաթաթված է, այն կտրու՛մ ենք կծիկից, և ազատ ծայրը ամրացնում` անց կացնելով արդեն փաթաթված թելերից մեկի տակը.



Թելով փաթաթված փուլչիկը 1-2 ժամ թողնում ենք, որ չորանա: Չորանալուց հետո որևէ սուր ծայրով պայթեցնում ենք փուլչիկը և նրա մնացորդները զգուշուբյամբ դուրս ենք բերում թելի գևի միջից.

